Հավելված N 1
ՀՀ կառավարության 2013 թվականի
սեպտեմբերի 13-ի N 1007 - Ն որոշման

«Զև

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ «ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԲԱԺՆԻ

Սահմանումներ

Գյուղական ֆինանսավորման կառույցի (այսուհետ՝ ԳՖԿ) սույն կանոնադրությունն ավելի ըմբռնելի դարձնելու նպատակով կկիրառվեն հետևյալ սահմանումները՝

1) փոխառու նշանակում է Հայաստանի Հանրապետություն,

2) ֆինանսավորման համաձայնագրեր նշանակում է գյուղական ֆինանսավորման կառույցի ծրագրային գործառնություններին աջակցելու նպատակով ԳԶՄՀ-ի և փոխառուի, ինչպես նաև փոխառուի և այլ դոնոր կազմակերպությունների միջև կնքված համաձայնագրեր,

3) ՇՀՖԾ նշանակում է Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի կողմից ֆինանսավորվող Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին ծրագիր,

4) ԳԶՄՀ նշանակում է Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամ,

5) ՎԽ նշանակում է վարկային խորհուրդ, ինչպես նկարագրված է ֆինանսավորման համաձայնագրերում,

6) ԾԻԳ նշանակում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հիմնադրված Ծրագրերի իրականացման գրասենյակ, որը պատասխանատու է Գյուղական կարողությունների ստեղծման ծրագրի (ԳԿՍԾ) իրականացման ընդհանուր համակարգման և կառավարման համար,

7) ԾԻԳ-ի կանոնադրություն նշանակում է Ծրագրերի իրականացման գրասենյակի կանոնադրություն, որը հաստատվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի N 461-Ն որոշմամբ,

8) ԾԻԳ-ի տնօրեն նշանակում է Ծրագրերի իրականացման գրասենյակի տնօրեն,

9) ՄՖԿ նշանակում է մասնակից ֆինանսական կառույց, ինչպես օրինակ՝ բանկ, վարկային և լիզինգային կազմակերպություն կամ այլ ֆինանսական կառույց, որն ընտրվում է գյուղական ֆինանսավորման կառույցի վերաֆինանսավորման գործառույթներին մասնակ-ցելու նպատակով,

10) ԾՂԽ նշանակում է ծրագրի ղեկավար խորհուրդ, ինչպես նկարագրված է ֆինանսավորման համաձայնագրերում,

11) ԳՏՏՋԾ նշանակում է ԳՋՄՀ-ի կողմից ֆինանսավորված Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագիր,

12) ԳՖԿ-ի ներդրումային ուղեցույց նշանակում է կանոնների և կանոնակարգերի համառոտագիր, որոնք ենթակա են կիրառման ԳՋՄՀ-ից և այլ դոնորներից ստացված ֆինանսական միջոցների կառավարման համար,

13) ԳՖԿ-ի ծրագրային հաշիվներ նշանակում է ցանկացած հաշիվ, որի միջոցով ԳՖԿ-ն ստանում է արտաքին օժանդակություն գյուղական ֆինանսավորման կառույցի ծրագրային գործառույթների համար և ցանկացած հաշիվ, որը ԳՖԿ-ն օգտագործում է ծրագրային գործառնությունների իրականացման համար,

14) ԳՖԿ-ի ծրագրային ակտիվները ներառում են բոլոր ֆինանսական միջոցները, որոնք տրամադրվում են ԳՖԿ-ին ԳՋՄՀ-ի կողմից ֆինանսավորված և վերահսկվող ծրագրերի միջոցով կամ այլ դոնոր կազմակերպությունների կողմից այն բացառիկ պայմանով, որ դրանք պետք է կառավարվեն գյուղական ֆինանսավորման կառույցի սույն կանոնադրությամբ: ԳՖԿ-ի ծրագրային ակտիվները նաև ներառում են հետադարձ հոսքերը մասնակից ֆինանսական կառույցներից, տոկոսագումարները և ցանկացած այլ ակտիվներ, որոնք հաշվեգրվում են նշված միջոցներին,

15) ԳՖԿ-ի տնօրեն նշանակում է գյուղական ֆինանսավորման կառույցի տնօրեն,

16) ԳՖԿ-ի ծրագրային գործառնություններ նշանակում է ֆինանսավորման համաձայնագրերում սահմանված կարգով գյուղական ֆինանսավորման կառույցի ծրագրային ակտիվների օգտագործում մասնակից ֆինանսական կառույցներին ֆինանսական միջոցներ տրամադրելու նպատակով՝ վերաֆինանսավորելու համապատասխան ծրագրերի վարկա-վորումը, ինչպես նաև ֆինանսավորելու այնպիսի ընթացիկ կամ այլ ծախսեր, որոնք անհրաժեշտ են գյուղական ֆինանսավորման կառույցի ծրագրային գործառնություններն իրականացնելու, կառավարելու և մշտադիտարկելու համար,

17) գյուղական ֆինանսավորման կառույց կամ ԳՖԿ նշանակում է ինքնուրույն միավոր ԾԻԳ-ի կառուցվածքում, ինչպես սահմանված է ԳՖԿ-ի սույն կանոնադրության մեջ:

1. Նախաբան

1.1. ԳՖԿ-ի սույն կանոնադրությունն ընդունվում է հաստատելու ԾԻԳ-ի կառուցվածքում ԳՖԿ-ի առանձին և ինքնուրույն կարգավիճակը բոլոր ֆինանսական միջոցների մասով, որոնք տրամադրվում են ԳՖԿ-ին ԳՋՄՀ-ի կողմից ֆինանսավորված և վերահսկվող ծրագրերի միջոցով կամ այլ դոնոր կազմակերպությունների կողմից այն բացառիկ պայմանով, որ դրանք պետք է կառավարվեն գյուղական ֆինանսավորման կառույցի սույն կանոնադրությամբ:

1.2. ԳՖԿ-ի սույն կանոնադրությունն ընդունվում է որպես հավելված ԾԻԳ-ի կանոնադրությանը: ԾԻԳ-ի կանոնադրության և ԳՖԿ-ի կանոնադրության միջև շարադրանքի անհամապատասխանության դեպքում գերակա է ԳՖԿ-ի սույն կանոնադրությունը: ԳՖԿ-ի կանոնադրության մեջ կատարվող ցանկացած փոփոխություն պետք է հաստատվի ԳՔՄՀ-ի կողմից:

2. ԳՖԿ-ի ծրագրային գործառնությունները

2.1. ԳՖԿ-ի ծրագրային գործառնությունները նշանակում են ծրագրային ակտիվների օգտագործում ՄՖԿ-ներին ֆինանսական միջոցներ տրամադրելու նպատակով՝ վերա-ֆինանսավորելու համապատասխան ծրագրերի վարկավորումը ներդրումային ուղեցույցին համապատասխան, ինչպես նաև ֆինանսավորելու այնպիսի ընթացիկ կամ այլ ծախսեր, որոնք ֆինանսավորման համաձայնագրերով սահմանված կարգով անհրաժեշտ են ԳՖԿ-ի ծրագրային գործառնություններն իրականացնելու, կառավարելու և մշտադիտարկելու համար:

Իր ծրագրային գործառույթների իրականացման համար ԳՖԿ-ն պետք է ունենա Հայաստանի Հանրապետության ազգային զինանշանով պաշտոնական կլոր դրոշմակնիք: Ընդհանուր առմամբ ԳՖԿ-ի ծրագրային գործառնությունները կիրականացվեն համաձայն համապա-տասխան կանոնակարգերի՝ գերակայության հետևյալ հաջորդականությամբ՝

1) ֆինանսավորման համաձայնագրեր,

2) ԳՖԿ-ի սույն կանոնադրությունը,

3) ԳՖԿ-ի ներդրումային ուղեցույցը:

3. ԳՖԿ-ի կառուցվածքը

ԳՖԿ-ի կառավարման մարմիններն են՝

<u>3.1. Ծրագրի ղեկավար խորհուրդ (ԾՂԽ)- ԾՂԽ-ն</u>

3.1.1. հաստատում է ԳՖԿ-ի ներդրումային ուղեցույցը և դրանում կատարված ցանկացած փոփոխություն և լրամշակում, որը ենթակա է համաձայնեցման Հայաստանի

Հանրապետության ֆինանսների նախարարության հետ և պետք է հաստատվի ԳԶՄՀ-ի և այլ համապատասխան դոնորների կողմից,

3.1.2. մշակում և վերահսկում է ԳՖԿ-ի գործառնությունների ընդհանուր քաղաքա-կանությունը,

3.1.3. որոշում է վերաֆինանսավորման ժամկետներն ու պայմանները, որոնք ենթակա են համաձայնեցման Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-րության հետ և պետք է հաստատվեն ԳԶՄՀ-ի և այլ համապատասխան դոնորների կողմից,

3.1.4. հաստատում է ԳՖԿ-ի տարեկան աշխատանքային պլան-բյուջեն,

3.1.5. հաստատում է ԳՖԿ-ի տարեկան և ֆինանսական հաշվետվությունները:

3.2. Վարկային խորհուրդը (ՎԽ)

3.2.1. հաստատում կամ մերժում է ՄՖԿ-ների կողմից ստացված վերաֆինանսավորման հայտեր ներդրումային ուղեցույցին համապատասխան,

3.2.2. ընդունում է որոշումներ՝ հիմնվելով ենթավարկերի /լիզինգային վարկերի ներդրումային ուղեցույցի ժամկետներին և պայմաններին համապատասխանելիության վրա:

3.3. ԾՂԽ-ի և ՎԽ-ի կազմը սահմանվում է ֆինանսական համաձայնագրերով:

3.4. ՎԽ-ի բոլոր որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Որոշման ընդունման ժամանակ ձայների հավասար լինելու դեպքում ՎԽ-ի նախագահի ձայնը վճռորոշ է: ՎԽ-ի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է անդամների առնվազն հիսուն տոկոսը: ՎԽ-ն իրավասու է մերժել հայտը, եթե այն չի համապատասխանում ԳՖԿ-ի ներդրումային ուղեցույցում նշված համապատասխանության չափանիշներին:

4.ԳՖԿ-ի տնօրենը

4.1. ԳՖԿ-ի տնօրենը պետք է ունենա համապատասխան բացառիկ լիազորություններ իրականացնելու ԳՖԿ-ի ծրագրային գործառնությունները, կատարի իր պարտակա-նությունները և իրականացնի իր ստանձնած լիազորությունները պատշաճ ջանասիրությամբ և պատասխանատվությամբ ԾՂԽ-ի ղեկավարության ներքո:

4.2. Մասնավորապես, ԳՖԿ-ի ծրագրային գործառնությունների շրջանակում ԳՖԿ-ի տնօրենը պետք է ունենա ԳՖԿ-ն ներկայացնելու, ԳՖԿ-ի հաշիվները վարելու և ԾԻԳ-ի անունից իրավական ուժ ունեցող պարտավորություններ ստանձնելու բացառիկ լիազորություններ: ԳՖԿ-ի տնօրենը պետք է իրականացնի իր ստանձնած լիազորությունները ԳՖԿ-ի ծրագրային գործառնությունների շրջանակում: ԾԻԳ-ի տնօրենը ԳՖԿ-ի տնօրենին պետք է հատկացնի ԾԻԳ-ի անունից գործելու մշտական լիազորություն ԳՖԿ-ի սույն կանոնադրությամբ իրեն վերապահված իրավասությունների սահմաններում:

4.3. ԳՖԿ-ի տնօրենի նշանակումը պետք է հաստատվի ԾՂԽ-ի, ինչպես նաև ԳՋՄՀ-ի կողմից և պետք է ունենա ԳՋՄՀ-ի համար ընդունելի որակավորում և փորձառություն: ԳՖԿ-ի տնօրենն անմիջականորեն հաշվետու է ԾՂԽ-ին: ԳՖԿ-ի տնօրենը հաշվետու է նաև ԾԻԳ-ի տնօրենին համաձայն ֆինանսական համաձայնագրերի հաշվետվողականության մասով պարտավորությունների, ինչպես նշված է ստորև ներկայացված 6.3-րդ կետում:

5. ԳՖԿ-ի աշխատակազմը

5.1. ԳՖԿ-ի աշխատակազմի ընտրությունը կատարվում է հետևյալ կերպ՝ ԳՖԿ-ի տնօրենը պետք է առաջարկի թեկնածուին համապատասխան պաշտոնում նշանակման համար, որից հետո թեկնածուն պաշտոնապես կնշանակվի համապատասխան պաշտոնում՝ ըստ կիրառվող օրենսդրության: ԳՖԿ-ի բանկային մասնագետը (մասնագետները) և հաշվա-պահը (հաշվապահները) նշանակվում և ազատվում են միայն ԳՋՄՀ-ի կողմից ստացված համաձայնության հիման վրա: ԳՖԿ-ի աշխատողներն իրականացնում են իրենց պարտա-

կանությունները ԳՖԿ-ի տնօրենի կողմից ստացված հանձնարարականներին համապատասխան և անմիջականորեն հաշվետու են ԳՖԿ-ի տնօրենին:

5.2. ԳՖԿ-ի ծրագրային ակտիվները կարող են օգտագործվել ԳՖԿ-ի տնօրենի և աշխատողների աշխատավարձերը վճարելու նպատակով: Աշխատավարձերը պետք է արդարացի և համապատասխան կերպով հաշվարկվեն՝ հաշվի առնելով այն աշխատանքային ծանրաբեռնվածությունը, որով աշխատում են ԳՖԿ-ի տնօրենը և աշխատակազմը ԳՖԿ-ի ծրագրային գործառնություններն իրականացնելու նպատակով՝ համաձայն ստորև ներկայացված 6.1-ին կետի:

6. Ֆինանսական կառավարում

6.1. ԳՖԿ-ի ծրագրային ակտիվները, այդ թվում նաև՝ վերաֆինանսավորման կապիտալի հետ հոսքերը և գործառնական ծախսերի խնայողությունները պետք է օգտագործվեն բացառապես ԳՖԿ-ի ծրագրային գործառնությունների համար: Սույն կանոնադրությամբ արգելվում է ԳՖԿ-ի ծրագրային ակտիվների օգտագործումն այլ, ոչ ԳՖԿ-ի ծրագրային գործառնությունների նպատակով:

6.2. ԳՖԿ-ի ծրագրային ակտիվներն առանձնացվում են ԾԻԳ-ի մյուս ակտիվներից և պետք է վերահսկվեն, հաշվառվեն և հաշվեստուգվեն առանձին: Միացումից հետո ԳՖԿ-ն շարունակում է օգտագործել մինչ իր գործառույթները ԾԻԳ-ին միացնելը շրջանառու միջոցները կառավարելու նպատակով կիրառվող համապատասխան համակարգչային ծրագրերը կամ կարող է օգտագործել համակարգչային որևէ այլ ծրագիր ԳՖԿ-ի տնօրենի որոշմամբ ԳԶՄՀ-ից հաստատում ստանալուց հետո: ԳՖԿ-ն պետք է ունենա առանձին բանկային հաշիվներ և ֆինանսական կառավարման համակարգ, ինչը հնարավորություն կտա իրականացնել ԳՖԿ-ի ծրագրային ակտիվների առանձին վերահսկում, հաշվառում և հաշվեստուգում:

6.3. Ընդհանուր տարեկան աշխատանքային պլան/բյուջե և առաջընթացի հաշվետվություն կազմելու համար ԳՖԿ-ի տնօրենը հաշվետու է ԾԻԳ-ի տնօրենին ԾԻԳ-ի կամ ֆինանսական համաձայնագրերով սահմանված հաշվետվության պահանջները բավարարելու նպատակով:

7. ԾԻԳ-ի կողմից ԳՖԿ-ի համար կատարված գործառնական ծախսերի փոխհատուցումը

7.1. Այն դեպքում, երբ ԳՖԿ-ն գտնվում է ԾԻԳ-ի տարածքում, ԾԻԳ-ը կարող է կատարել ծախսեր ԳՖԿ-ի անունից՝ ԳՖԿ-ի ծրագրային գործառնություններին աջակցելու նպատակով: Նման ծախսերը կարող են ներառել՝

7.1.1. տարածքի վարձակալություն, այդ թվում՝ նաև վճարումներ էլեկտրաէներգիայի, գազի, հեռախոսի, տեղեկատվական տեխնոլոգիաների և այլնի համար,

7.1.2. գրասենյակի կառավարում, այդ թվում՝ մաքրություն, անվտանգություն և այլն,

7.1.3. նյութատեխնիկական ապահովում, այդ թվում՝ վարորդներ և մեքենաներ:

7.2. Անհրաժեշտության դեպքում ԾԻԳ-ի տնօրենը և ԳՖԿ-ի տնօրենը վերոնշյալ դրույթների շրջանակներում համաձայնություն պետք է ձեռք բերեն կատարվող ծախսերի ծավալների մանրամասնությունների վերաբերյալ: ԾԻԳ-ը ԳՖԿ-ին եռամսյակային կտրվածքով կներկայացնի հաշիվ-ապրանքագիր ԾԻԳ-ի կողմից կատարված այն ծախսերի մասին, որոնք սահմանված կարգով ենթակա կլինեն փոխհատուցման ԳՖԿ-ի հաշիվներից:

8. ԳՖԿ-ի իրավունքներն ու պարտավորությունները, իրավասությունները և պատասխանատվությունը

8.1. ԳՖԿ-ի իրավունքներն ու պարտականությունները, իրավասությունները և պատաս-խանատվությունները, կապված ծրագրային գործառնությունների և (կամ) ակտիվների հետ, որոնք ԾԻԳ-ի հետ միավորման արդյունքում փոխանցվել են ԾԻԳ-ին, կարգավորվում են սույն կանոնադրությամբ և վերագրվում են ԳՖԿ-ին՝ որպես ԾԻԳ-ի կազմում ինքնուրույն միավոր:

Այդ իրավունքներն ու պարտականությունները, իրավասությունները և պատասխանատվությունները կազմում են ԳՖԿ-ի ծրագրային գործառույթների մաս և գտնվում են ԳՖԿ-ի տնօրենի բացառիկ իրավասությունների շրջանակներում բացառությամբ այն իրավասությունների, որոնք սույն կանոնադրությամբ վերապահված են ԾԻԳ-ի տնօրենին:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2013 թվականի
սեպտեմբերի 13-ի N 1007 - Ն որոշման

<<Հավելված N 2
ՀՀ կառավարության 2011 թվականի
ապրիլի 28-ի N 461 - Ն որոշման

Կ Ա Ռ Ո Ւ Ց Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
«ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ

Կառուցվածքային ստորաբաժանումներ

1. Ֆինանսահաշվային բաժին

2. Շինարարության վերահսկման բաժին

3. Մոնիթորինգի և գնահատման, ծրագրերի համակարգման, զարգացման բաժին

4. Գնումների բաժին

5. Գյուղական ֆինանսավորման բաժին

6. Գործերի կառավարման բաժին»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ